ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թ. հուլիսի 10-ից 14-ը Սինգապուր

գործուղման արդյունքների մասին

1. **Գործուղվողը՝**

Սերգեյ Ավետիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Սինգապուր, 2017 թ. հուլիսի 10-ից 14-ը

Հրավիրող կողմը՝

Կևին Շում, Գլխավոր Տնօրեն, Սինգապուրի քաղաքացիական ավիացիայի իշխանություն

4. **Գործուղման նպատակը՝**

- Մասնակցություն Քաղաքացիական ավիացիայի ոլորտի ղեկավարների վեցերորդ համաշխարհային ֆորումին:
- Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի ստորագրում:

5. **Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը՝**

- Գլխավոր վարչության պետ Սերգեյ Ավետիսյանը 2017 թվականի հուլիսի 10-ից 14-ը մասնակցել է Քաղաքացիական ավիացիայի ոլորտի ղեկավարների վեցերորդ համաշխարհային ֆորումին: Ֆորումի շրջանակներում քննարկվել են համաշխարհային քաղաքացիական ավիացիայի ոլորտի նոր մարտահրավերները,

դրանց արձագանքելու համար պետությունների կողմից անհրաժեշտ միջոցառումները և ոլորտի մասնագետների պատրաստման և վերապատրաստման կարևորությունը: Կարևորվել են, հատկապես, համաշխարհային ուղևորափոխադրումների ծավալի աճի պայմաններում անվտանգության միջոցառումների պատշաճ իրականացումը և վերջին շրջանում նկատելի զարգացում ապրող անօդաչու սարքերի շահագործման կարգավորումը:

Գլխավոր վարչության պետ Սերգեյ Ավետիսյանը ունեցել է մի շարք հանդիպումներ այլ գործընկեր պետությունների ավիացիոն իշխանությունների ներկայացուցիչների հետ՝ քննարկելով երկուստեք կարևորության հարցեր և ձեռք բերելով հետագա համագործակցության պայմանավորվածություններ:

- Գլխավոր վարչության պետ Սերգեյ Ավետիսյանի՝ Սինգապուրի Հանրապետություն կատարած այցի շրջանակում 2017 թվականի հուլիսի 12-ին ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագիրը:

Նոր համաձայնագրով կարգավորվում են երկու պետությունների միջև հարաբերությունները թռիչքային և ավիացիոն անվտանգության, լիցենզիաների և վկայականների փոխճանաչման, ավիաընկերությունների նշանակման և լիազորությունների տրամադրման և մի շարք այլ ոլորտներում, ինչպես նաև ամրագրվում է երկու կողմերի ավիաընկերությունների համար առանց սահմանափակումների առևտրային գործունեության իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման պարտավորությունը:

17-ը հուլիսի, 2017թ.